

գաղթականք եղեր են 140675 հոգիք. նախընթաց տարին էին 197269 հոգիք, որոնցմէ կային 116490 Անգղիայէ, 60493 Իռլանտայիք և 20286 Սկոտլանդիք:

Անցեալ 1875 տարւոյն 173809 գաղ-

թականներէն 105046 հոգիք զնացին Միացեալ-Նահանգները, 35525 հոգիք Աւստրալիա և Նոր-Չելանտա. 17378 հոգիք անգղիական երկիրները. 15860 հոգիք ուրիշ երկիրներ:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Գաղղիներէն օրագիր մը, (Bulletin français), կը հրատարակէ հետեւեալ համառոտ վիճակագրութիւնը փոխադրութեանց, որ կատարեր է յամին 1875 թարիզու օմնիպիւններուն ընկերութիւնը:

Անցեալ տարի թարիզու օմնիպիւնները փոխադրեր են օրն 345000 հոգի, այսինքն 473 հոգի իւրաքանչիւր օմնիպիւն, 31 հոգի ամեն մէկ ընթացքին: Թամին 1874 այս ճանապարհորդաց թիւն հազիւ քառորդն եղեր էր:

Իւրաքանչիւր օմնիպիւն, միջական հաշուով, օրն ընթացքեր է 92 քիւմէդը. կառաձիգ և օգնական ձիոց միջական աշխատութիւնն եղեր է օրը 16 քիւմէդը և 436 մէդը:

Ախուր պատրաստ դանուող ձիոց միջական թիւն էր օրն 8250, որոնք 666 օմնիպիւնի կը ծառայէին, հետևաբար իւրաքանչիւր կառքը 12 ձի կը լծէր:

Միջական մուտքն եղեր է առ իւրաքանչիւր ճանապարհորդ 18 հարիւրորդ և $\frac{7}{1000}$, իսկ միջական մուտքն առ իւրաքանչիւր քիւմէդը՝ եղեր է 95 հարիւրորդ:

Ներկայ տարւոյս յուլիսի 29ին վերջացող շաբաթուան մէջ՝ երկրագնդի քանի մը զլխաւոր քաղաքացի մեռելոց թիւն հետեւեալն էր, ըստ Աւստրիական լրագրին (Gazette d'Augsburg):

Առ 100000 բնակիչ մեռեր են բարիւ 47 հոգիք: Գերմանիոյ մէջ մեռեր

են. Պեռլին՝ 75 հոգիք, Պրեզլաւ՝ 76 հոգիք, Գոլմեր՝ 75 հոգիք, Ֆրանք-ֆորդ Մայնայ՝ 50 հոգիք, Մակտեպուրկ՝ 59 հոգիք, Քարլսրուհէ՝ 54 հոգիք, Միւնիխ՝ 69 հոգիք, Լայքցիլ՝ 50 հոգիք, Վիլհայմսէն՝ 37 հոգիք, և այլն: Աւստրիոյ մէջ մեռեր են. Վեննա՝ 43 հոգիք, Բրակա՝ 79 հոգիք, Պուտաբէշթ՝ 96 հոգիք, Պեւճիոյ մէջ մեռեր են. Պրիւսսէն՝ 56 հոգիք, Հոլանտիոյ մէջ մեռեր են. Ամսթերտամ՝ 45 հոգիք, Ռոդդերտամ՝ 52 հոգիք, Լա Հէյ՝ 70 հոգիք, Չուիցերիոյ մէջ մեռեր են. Պալ՝ 48 հոգիք, Սկանտինաւիոյ մէջ մեռեր են. Քրիստիանիա՝ 57 հոգիք, Սլոպեհոլմ՝ 56 հոգիք, Գորէնհակէն՝ 46 հոգիք, Խալսիոյ մէջ մեռեր են. Հոսլով՝ 58 հոգիք, Գուրին՝ 42 հոգիք, Անգղիոյ մէջ մեռեր են. Լոնտրա 56 հոգիք, Կլէսկոյ 42 հոգիք, Լիվրքուլ՝ 48 հոգիք, Տըպլին՝ 36 հոգիք, Էսթմուրկ՝ 34 հոգիք, Եդիպտոսի մէջ մեռեր են. Ալքըսանդրիա՝ 73 հոգիք, Ամերիկայի Միացեալ-Նահանգացի մէջ մեռեր են. Նիւ-Եոսք՝ 82 հոգիք, Ֆիլատելֆիա՝ 77 հոգիք, Պոսթըն 46 հոգիք, Շիքագոյ՝ 50 հոգիք, Հնդկաստանի մէջ մեռեր են. Պոմպայի՝ 45 հոգիք, Կալիպթա՝ 48 հոգիք, Մատրաս՝ 79 հոգիք:

Մօտերս գաղղիներէն լրագիրն Journal des Débats հետեւեալ տեղեկութիւնները կու տար Ամերիկայի Միացեալ-Նահանգաց բժիշկներուն առ իւ-

բարանիւր այցելութիւն ընդունած վարձքին վրայ:

Պարզ այցելութիւն մը տեղացւոյն՝ 2 տոլար, ոչ տեղացւոյ մը՝ 5 տոլար. նաու մը տրուած այցելութիւնը՝ ցոյսին 5 տոլար, գիշերը 20 տոլար. այցելութիւն մը այն ժամերուն երբ բժիշկը կ'ընդունի իր հիւանդներն իրեն պաշտօնատեղին՝ (office) 20 տոլար. սովորական ծննդութիւն մը՝ 50 տոլար, դժուարածննդութիւն մը՝ 100 տոլար, կեսարական ծննդութիւն (opération césarienne) 500 տոլար. բազկակտրուութիւն մը՝ 50 տոլար, սրճնքակտրութիւն մը՝ 100 տոլար:

Այս գինները ստորին սեպուածներն են, որոնք կ'աճին ըստ ծանրութեան պարագային և ըստ կամի բժշկին:

Յամին 1875, իտալիոյ մէջ ծներ էին 1,035,577՝ տղայք, որոնցմէ 533,511 մանչ էին և 501,866 աղջիկ:

Մանչ տղայոց մէջ 496,758 հարազատ էին, 224,833 անհարազատք. 13,270 ընկեցիկ. իսկ աղջիկ տղայոց մէջ 466,566 հարազատք էին, 211,693 անհարազատք, 14,141 ընկեցիկք:

Մեռելոց բովանդակութիւն էր 843,161, որոնցմէ 431,756 էրիկ մարդ էին և 411,405 կնիկ մարդ. էրիկ մարդկանցմէ 294,765 ամուրի էին, 95,011 ամուսնացեալ. կնիկ մարդկանցմէ 261,141 ամուրի էին, 70,862 ամուսնացեալ:

Մեռելածնաց թիւն էր 298,311. ուրոնցմէ 169,17 մանչ էին, և 129,13 աղջիկ. մանչ տղայոց 154,19 հարազատ էին և 12,10 անհարազատ. իսկ աղջիկ տղայոց՝ 116,95 հարազատ էին, 956 անհարազատ, 262 ընկեցիկ:

Ծննդոց առաւելութիւնը մեռելոց վրայ բոլոր տարուան մէջ եղաւ 192,216:

Յամին 1875 զեկտեմբերի 31, իտալիոյ բոլոր բնակիչն էր 27,482,174:

Անգղիոյ մէջ բժշկաց համեմատութիւնն հետեւեալ կերպով է. ըստ նորատիպ պաշտօնական յիշատակարանաց, անգղիական բանակն ունի մէկ

ՊՐԱԿ Դ.

վիրարոյժ առ 202 զինուոր, իսկ քաղաքացիք մէկ բժիշկ միայն առ 1276 բնակիչ: Բժշկաց թիւն, որ յամին 1851 էր 9.7 առ 10000 բնակիչ, յամին 1871 էր միայն 8.3: Բանակն ունի 4.9 բժիշկ առ 1000 զինուոր: Շատ դժուար կ'ըլլայ բանակին մէջ բժշկաց պակասը. նուկ կարող անձինքով: Բնակչաց ընծայուած բժշկական օգնութիւնը Անգլիոյ մէջ շատ պակասաւոր է եղեր յամին 1851, նոյնպէս դարձեալ պակասաւոր է յամին 1876, որով շատերն առանց բժշկական օգնութեան կը մընան: Ընդհակառակն իռլանտայի մէջ բժշկաց թիւն, որ յամին 1851 էր 4 առ 10000 բնակիչ, յամին 1861 եղաւ 5 առ 10000 բնակիչ, և յամին 1871 աւելցաւ 6 առ 10000 բնակիչ. բայց Սկոտլանդի մէջ ալ Անգղիոյ պէս բժշկաց թիւը նուազեցաւ. յամին 1855 էր 7.2 առ 10000 բնակիչ, 6.1 յամին 1861 և 5.2 յամին 1871: Ուստի բժշկաց թիւն համեմատ չըլլալով բնակչաց բազմութեանն, աղքատներն անխնամ կը մնան, և սուտ բժիշկներէ կը դարմանուին:

Հիմա Եւրոպայի մէջ 1615 դորժաւրանք կան բանջարէ չարարի և 269 զտարանք, որոնք հետեւեալ կերպով կը բաշխուին ըստ այլ և. այլ տէրութեանց:

	Գործարանք	Զտորանք
Գաղղիա	552	49
Աւստրիա	245	5
Գերմանիա	339	68
Պեւճիա	151	37
Հոլանտա	32	15
Ռուսիա	267	10
Տանիմարդա	2	3
Շուեետ	4	7
Իտալիա	3	2
Սպանիա	20	—
Անգղիա	—	62
Բորդուկալ	—	7

Գաղղիներէն օրագիր մը (Economiste français) վիճակագրութիւն մը կը հրատարակէ անձնասպանութեանց, որ կատարուեր են Գաղղիոյ մէջ, սկսեալ 1827 թուականէն մինչև 1874:

Այս վիճակագրութենէն հետևեալ տեղեկութիւնները կը քաղենք:

Յամին 1827, կատարուեր են 1542 անձնասպանութիւնք, այսինքն $\frac{1}{8}$ առ 100000 բնակիչ:

Յամին 1830, կատարուեր են 1756

անձնասպանութիւնք, այսինքն $\frac{1}{4}$ առ 100000 բնակիչ:

Յամին 1840, անձնասպանութեանց թիւը կ'աւելնայ և կը հասնի 2752:

Տասը տարի ետքը, յամին 1850, անձնասպանութեց թիւը կ'ըլլայ 3598, այսինքն $\frac{10}{1}$ առ 100000 բնակիչ: Յամին 1860, անձնասպանութեանց թիւը կ'ըլլայ 4050. յամին 1870, կ'ըլլայ 5000, յամին 1874, կ'ըլլայ 5617, այսինքն $\frac{15}{1}$ առ 100000 բնակիչ:

ԹՈՒՐԳԻՈՅ ՆԱԽՍՏՈՐՄԻՂԸ

Թուրքիոյ չոգեշարժ պատերազմաւ կան նաւատորմիցը կը բաղկանայ զրահաւոր կրկնակարգ (frégate) և միակարգ (corvette) նաւերէ, որոնք ամենն

ալ Արմսդորնի թնդանօթներով զինուած են: Այս նաւերն հետևեալն են.

	Չի	Թնդանօթ
1. Մէսուտիէ, կրկնակարգ	7200	14
2. Նիւսրէզտիէ, կրկնակարգ	800	12
3. Մէմուռհիէ, կրկնակարգ	7200	14
4. Ազիզիէ, կրկնակարգ	3050	16
5. Մահմուտիէ, կրկնակարգ	3050	16
6. Օսմանիէ, կրկնակարգ	3050	16
7. Օրխանիէ, կրկնակարգ	3050	16
8. Ասարը-Դէվֆիլը, կրկնակարգ	3568	8
9. Մուգատէմէ-Խայրը, միակարգ	3250	4
10. Ֆէթիհ-Պուլէնտ, միակարգ	3250	4
11. Իտիլատիէ, միակարգ	300	5
12. Աջնի-Իլլահ, միակարգ	400	4
13. Մայինի-Չաֆէր, միակարգ	400	4
14. Ասարը-Շէֆքէթ, միակարգ	350	5
15. Նէտուհիմ-Շէֆքէթ, միակարգ	350	5
16. Լուգֆի-Ճէլիլ, միակարգ	200	5
17. Հըֆզը-Ռահման, միակարգ	200	5
	39668	153

Ընդ ամենը 17 զրահաւոր նաւք. ուրոնցմէ 15 պատրաստական են, և երկրորդն ու երրորդն ալ լմննալու մատ են, և քիչ ժամանակէն պատրաստ կ'ըլլան: Բաց 'ի ասոնցմէ կան նաև պը-

տուտակաւոր (à élise) պատերազմական նաւեր, որոնք լաւ վիճակի մէջ կը գտնուին, և են

3 ճակատող նաւեր (vaisseaux de ligne), որոնք կրնան դործածուիլ փո-